ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 61/9824

«24» 05 2019թ.

«ԳԱԼԻՄԱ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Դ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովհաննիսյան

ք. Երևան, Մամիկոնյան 8ա, բն.4

Երևանի քաղաքապետարանի և «ԳԱԼԻՄԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.05.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Ընկերության կողմից ապրանքի մատակարարման ընթացքում արձանագրվել են մի շարք խախտումներ, մասնավորապես՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանել պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով սահմանված պահանջներին: Համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գրության.

- մեկ անձին տրամադրվող փաթեթում ներառված ամբողջ սնունդը պետք է համապատասխաներ սննդի /48 ժամ և ավելի/ պիտանելիության ժամկետի պահպանմանը, որպես պարտադիր պահանջ, ամբողջությամբ փաթեթավորված մեկ բաժինն իր մեջ պետք է պարունակեր (սենդվիչ՝ մեկ հատ պանրով, մեկ հատ ապխտած երշիկով, մեկ հատ ջուր, հյութ, սուրճ, թխվածքաբլիթ, անձեռոցիկ), սակայն 48 ժամ պիտանելության ժամկետ նշված էր միայն հացի համար, փաթեթներն ամբողջական պատրաստ չէին, փաթեթում ներառված ապրանքները տրամադրվում էր առանձին-առանձին՝ հանգեցնելով մի շարք անհարմարությունների փաթեթների հետագա բաշխման ընթացքում: Սենդվիչների պանրի մի մասը և ապխտած երշիկն ամբողջությամբ չեն համապատասխանել պահանջվող չափանիշներին /որոնց տեսականու վերաբերյալ մեր կողմից հստակ պահանջ է ներկայացվել/ և այլն,

- փաթեթները պետք է տրամադրվեին մեկնելու օրը՝ ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում, մայիսի 17-ին, ժամը 18:00-ին, ամբողջ թվաքանակով, ինչը չի կատարվել: Մայիսի 17-ին ապրանքների առաջին խմբաքանակը՝ առանց ապրանքների ամբողջական կոմպլեկտավորման, տրամադրվել է ժամը 20:30-ի սահմաններում, ոչ ամբողջ խմբաքանակով, ապրանքի որոշ խմբաքանակ մատակարարվել է երեկոյան ժամը 23:00 /ի դեպ ավտոբուսները սննդի ուշացման պատճառով մեկնել են մեկ ժամ ուշացումով/, իսկ ավտոբուսների մեկնման ժամանակ շուրջ 200 փաթեթ մատակարարված չի եղել, որը հեռախոսային բանակցություններից հետո, դարձյալ չկոմպլեկտավորված, ճանապարհին է փոխանցվել պատվիրատուին՝ այդպիսով խախտելով նաև պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման վայրը,

- Ընկերության ենթադրյալ արտադրամաս այցելության ընթացքում պարզվել է, որ մատակարարվող սնունդը պատարաստվում է սանիտարահիգիենիկ անթույլատրելի պայմաններում, որևէ աշխատակցի հանդերձանք չէր համապատասխանում սննդի հետ աշխատելու չափորոշիչներին, նախօրոք պայմանավորված երշիկի և պանրի տեսականու փոխարեն ուրիշ մակնանշման ապրանք էր փաթեթավորվում :

Վերը նշված փաստացի հանգամանքներից ելնելով և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.4 կետի ա) ենթակետը՝ Ընկերության կողմից ս/թ մայիսի 18-ին մատակարարված ապրանքները չեն ընդունվել, իսկ ս/թ մայիսի 17-ին մատակարարված ապրանքներն ընդունվել են՝ հաշվի առնելով ԼՂՀ և ՀՀ սահմանամերձ զորամասերում ծառայող երևանաբնակ զինծառայողների ծնողների տեսակցության ամենամյա միջոցառման ծրագրի իրականացման շրջանակներում սննդի ապահովման հրատապությունը և հույժ անհրաժեշտությունը ՝ չնայած վերոնշված խախտումների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.....»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրանունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի (Պայմանագրի չկատարված մասի՝ 886736 (Ութ հարյուր ութսունվեց հազար յոթ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ գումարի չափով) հրաժարվում է Ընկերության հետ կնքված ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն պայմանագրի կատարման ապահովման տուժանքի մասին համաձայնագրի 1.4 կետի՝ տուժանքի մասին համաձայնագիրը կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի կատարման ապահովման գումարը գանձելու նպատակով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Է. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Համբարձումյան
011 514-375